ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2016 թվականի
փետրվարի 1-4-ի չորսօրյա նիստերի մասին

N ը/կ	**Հարցի անվանումը**	**Հեղինակը**	**Ծանոթություն**
1	**2**	**3**	**4**
1.	ա) «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» բ) «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» (երկրորդ ընթերցում)	**ՀՀ կառավարություն** Կ-904,904[1]-02.12.2015-ԳԿ-010/1 **Ա.ԱՇՈՏՅԱՆ**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 111 կողմ, 2 դեմ, 0 ձեռնպահ ձայներով:
2.	«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման մշտական հանձնաժողովների թիվը, անվանումները և գործունեության ոլորտները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 31-ի ԱԺՈ-004-Ա որոշման մեջ լրացում կատարելու և Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում ընտրելու համար Ազգային ժողովին թեկնածու առաջարկելու կարգի մասին»	**ՀՀ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ** Պ-939 22.01.2016,29.01.2016 -ՊԻ-011/0 Հովհաննես Սահակյան, ԽոսրովՀարությունյան Արտակ Դավթյան, Գագիկ Մելիքյան, Վահրամ Մկրտչյան, Գագիկ Մինասյան, Միքայել Մելքումյան, Նաիրա Զոհրաբյան, Արծվիկ Մինասյան, Տիգրան Ուրիխանյան	Քննարկվեց և ընդունվեց 89, 89 կողմ, 16 դեմ, 6 ձեռնպահ ձայներով:

3.	«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին»	**ՀՀ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ** Պ-853-17.09.2015-ՏՀ-010/0 Վարդան Այվազյան Խաչատուր Քոքոբելյան, Միքայել Մելքումյան	Նախ քննարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 114 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով, ապա՝ քննարկվեց և 114 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ:
4.	**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԱՎԵՐԱՑՈՒՄ**	**ՀՀ ՆԱԽԱԳԱՀ**	
4.1	«Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2015 թվականի հոկտեմբերի 13-ին ստորագրված «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր-Ծրագիր 2» (ընթացիկ գործառնություններ) վարկային համաձայնագիր	Ն-929-29.12.2015-ԱՀ-ՖՎ-011/0 **Կ.ԱՐԵՅԱՆ**	ԱԺ-ը վավերացրեց համաձայնագիրը՝ 78 կողմ, 20 դեմ, 12 ձեռնպահ ձայներով:
4.2	«Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2015 թվականի օգոստոսի 26-ին ստորագրված «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիր	Ն-912-09.12.2015-ԱՀ-ՖՎ 011/0 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**	Քննարկվեց, սակայն քվեարկություն չկազմակերպվեց:

Փետրվարի 1-4-ի չորսօրյա նիստերի ընթացքում՝

- Հայտարարությամբ հանդես եկան 22 պատգամավոր:
- 12 պատգամավոր բանավոր հարցերով դիմեցին կառավարությանը:
- ԱԺ-ը 85 կողմ, 8 դեմ, 13 ձեռնպահ ձայներով հաստատեց ԱԺ-ի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորման կարգը: